ՊԵՏՐՈՍ ԱՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

1830—1880 թուականներուն Ալաշկերտի մէջ գործունէութեամբ հռչակուած էր Պետրոս աղա Գրիգորեան. սա հարուստ և հանճարով մէկն էր, իւր 50 ամեայ հասակին մէջ մեծամեծ գործեր կատարած՝ ժողովրդեան ճշմարիտ առաջնորդ դարձած էր, ունէր կառավարութեան վերայ մեծ ազդեցութիւն, նորանից կախնածէին ոչ թէ Ալաշկերտի, Գարաքիլիսէի, Դիատինի և Անդափի կառավարիչներն, այլ մինչև անգամ Պայազիտի և Կարնոյ փաշաներն: Քանի, քանի անգամ Կարին, Պօլիս դիմած՝ իւր խօսքը առաջ տարած է:

Ինքը որպէս ժողովրդեան ճշմարիտ պահապան՝ նոյնպէս ժողովուրդն ևս իւր ձայնին լսող և իրեն հետևող լինելով և որոց ուժով շատ անգամ փաշաներն կը պաշտօնանկէր:

Պետրոս աղան ունեցաւ շատ մի հակառակորդներ, որք միանալով մի հնար գտան, աքսորեցին զինք. աքսորանքէ դառնալէ յետոյ աւելի մեծ գործերու ձեռնարկեց, հակառակորդներն սպանելու փորձ փորձեցին:

Պետրոս աղան մի անգամ Կարին գացած էր փաշայի հետ դատուելու և յաղթանակաւ Ալաշկերտ դարձած և Մօլլա-Սիւլէյման գիւղն իջևանած էր:

Նորա սովորութիւնն էր գիշերը քնած միջոցին ոտներն բարձի կողմն դարձնել, այնպէս քնիլ:

Մէհմէտ փաշայի մարդիկն գաղտնի ներս կը մտնեն, հարուածներ կտան ոտներուն, կարծելով գլուխն է. բարբարաղդաբար կաղատի Պետրոս աղան:

Հետևեալ օր փաշան քանի երևելի անձինքներով